## Գերմանական ընկերությունները Հայաստանում




# «Mercedes-Benz» երազանքը Հայաստանում

Կան մեքենաներ, որոնք պարզապես փոխադրամիջոց են: Կան մեքենաներ, որոնց կարելի է համարել հարմարավետության խորհրդանիշ եւ կան այնպիսիք, որոնք միանշանակ շքեղություն են: Mercedes-Benz-ն այս երեք գաղափարների մարմնացումն է: Շատերի կարծիքով Mercedes-ը բոլոր մեքենաներից ամենաշքեղն է, իսկ նրանք, ովքեր երբեւէ եղել են այս մեքենայի ղեկին եւ վայելել նրա իսկական «համն ու հոտը», ավելի քան վստահ են դրանում:

«Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ն, լինելով «ԴայմլերՔրայսլեր» կոնցեռնի միակ եւ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, 2004 թվականից մեր երկրում ներկայացնում է Mercedes-Benz ապրանքանիշը եւ վայելում է բազմաթիվ հաճախորդների եւ երկրպագուների հարգանքը:



Ընկերությունը Mercedes-Benz մակնիշի մեքենաների սիրահարներին առաջարկում է մարդատար եւ ուղեւորաբեռնատար մեքենաներ, օրիգինալ պահեստամասեր, Mercedes-Benz ապրանքանիշը կրող պարագաներ եւ հուշանվերներ: Այն նաեւ իրականացնում է վնասված եւ վթարված մեքենաների որակյալ տեխսպասարկում՝ ներառյալ թափքի նորոգման եւ ներկման ծառայություններ՝ համապատասխան «ԴայմլերՔրայսլեր»-ի չափանիշներին:



«ԴայմլերՔրայսլեր» կոնցեռնը իր հաճախորդներին շարունակում է զարմացնել շլացուցիչ արտաքինով, յուրօրինակ դիզայնով, հզոր տեխնիկական եւ տեխնոլոգիական տվյալներով գերհարմարավետ ավտոմեքենաներով: «Ավանգարդ Մոթորս» ՍՊԸ-ն մշտապես իր սպառողներին է ներկայացնում վերը թվարկված «ԴայմլերՔրայսլեր»-ի նորույթներն ու նորամուծությունները:

Այս տարի ընկերությունը Հայաստան է ներկրել մի քանի նոր, հետաքրքրական եւ հզոր մոդելներ. S-ը՝ իր դինամիկ եւ բացառիկ դիզայնով, GL-ը՝ իր էլեգանտ եւ հզոր կառուցվածքով, R-ը՝ իր հարմարավետ ինտերիերով եւ յուրօրինակ առանձնահատկություններով եւ B-ն՝ սպորտային եւ դինամիկ կառուցվածքով:

S դասը գոռոզ է եւ մեծամիտ՝ իր վեհապանծ կառուցվածքով եւ հզոր տեսքով հանդերձ: Այն ստեղծված է բիզնես դասի համար, որը թույլ է տալիս գրասենյակային բանակցություններ վարել չկտրվելով միջավայրից: Չնայած «լուրջ» տեսքին, հնարավորություն է տալիս պատանեկանալ՝ օգտագործելով շարժիչի ողջ հզորությունը:

GL-ը գերհզոր արտագնա մեքենա է եւ արտաքնապես, եւ հզորությամբ: Այն իր նմանակիցների շրջանում միանշանակ «առաջնորդ» է, որն իր ղեկին նստած վարորդին մեծ արագության ժամանակ պատճառում է հարմարավետության եւ անվտանգության զգացում:

Իսկ համեստ, բայց հպարտ R դասին նայելիս հարց է առաջանում՝ «չգնալ արդյո՞ք խաղից դուրս ու մի լավ զվարճանալ»: B-ն իր սպորտային կառուցվածքով խոստանում է սուր զգացումներ:

Դեռ երկար կարելի է խոսել Mercedes-Benz-ի տարբեր մոդելների մասին, սակայն կան բնութագրեր, որ վերագրելի են նրանց բոլորին. այս մակնիշը ամենաառաջադեմն ու կատարելագործվածն է մեքենաների ոլորտում: Ամեն ինչից զատ դրանք նախատեսված են բավարարելու այն սպառողների պահանջները, ում համար շքեղությունը զուգակցվում է մատչելիության եւ հարմարավետության հետ:

Mercedes-Benz մակնիշի յուրաքանչյուր նոր մոդելի ականատես լինելով՝ մենք ասում ենք. «Սա ամենալավն է», սակայն միեւնույն ժամանակ գիտակցում, որ հաջորդն ավելին է լինելու:

*ք.Երեւան,*
*Գայի պողոտա 14/3*
*հեռ.66 88 00*
*ֆաքս. 66 89 00*
*էլ. փոստ. sales@mercedes-benz.am*
*www.mercedes-benz.am*

# Նոր ղեկին՝ Նորովի հաճույքով

Այս տարի «Եվրոմոթորս» ընկերությունը «BMW Group»-ի շարունակաբար նորացվող գամմայից հայ ավտոմոբիլասիրահարներին առաջարկում է X3 նորացված արտաքինով եւ 3-րդ դասի կուպե նոր մեքենաները: Սրանք մեքենաներ են, որոնք ստեղծված են ավտոարդյունաբերության նորաձեւության վերջին կանոնների համաձայն եւ աչքի են ընկնում միաժամանակ թե՛ արտաքին եւ թե՛ ներքին հարուստ տվյալներով:

Հաջորդ X5 նոր՝ երկրորդ սերնդի մեքենան Հայաստանում կլինի 2007 թվականին: Ավտոսիրողները գիտեն, որ այն պրոֆեսիոնալ աշխատանքի, դիզայներական բարձր ճաշակի ու վառ երեւակայության արդյունք է:

«BMW Group»-ը տարեցտարի ավելացնում է իր հաճախորդների թիվը՝ պարբերաբար սահմանելով նոր ստանդարտներ ավտոմեքենաների աշխարհում եւ մշտապես հանդես գալով նոր ու թարմ գաղափարներով: Այսօր այն աշխարհում ամենահին եւ ամենաշքեղ ավտոմեքենաներ արտադրողներից մեկն է:



Ընկերության պատմությունը հին է եւ սկսվել է 1913 թվականին, երբ գերմանական Մյունխեն քաղաքում Կառլ Ռապը եւ Գուստավ Օտտոն հիմնեցին ինքնաթիռային շարժիչների երկու շատ փոքր գրասենյակ: Հենց այս թվականն էլ ընդունված է համարել BMW-ի հիմնադրման տարեթիվը:

Dixi առաջին մեքենայից հետո շատ տարիներ անց այսօր «BMW Group»-ն իր սպառողին է ներկայացնում ամենաշքեղ մոդելների արագընթաց ու հարմարավետ, հզոր եւ անվտանգ մեքենաներ, որի ղեկին նստած վարորդը միայն կարող է զգալ այն կատարյալ հաճույքը, որը կարող է պատճառել BMW ավտոմեքենան:




Եվրոմոթորս ընկերությունը, որը «BMW Group»-ի բացառիկ ներկրողն ու պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում սկսած 1998 թվականից, գիտակցում է իր աշխատանքի կարեւորությունը եւ ապահովում պրոֆեսիոնալ սպասարկում իր հաճախորդներին ավտոմեքենաների վաճառքի, ապառիկի ձեւակերպման, հետերաշխիքային սպասարկման, ավտոտեխսպասարկման եւ այլ բնագավառներում:

Ընկերությունը փորձում է հայ սպառողին ապահովել այնպիսի բարձր հնարավորություններով, ինչպիսիք «BMW Group»-ի ողջ աշխարհում սփռված ներկայացուցչություններում են:

*Հասցե՝*
*Երեւան-375015, Գրիգոր Լուսավորչի փող. 7*
*Հեռ. (10)544080,544060*
*Ֆաքս. (10)544404*
*էլ. հասցե՝ info@euromotors.am*
*http://bmw.am*

